

---

## **ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՄՈԴԵԼԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԵՏԽՈՐՃՐԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

### **ՄԱՐԻՆԵ ՅԱՐՄԱԼՈՅԱՆ**

Քաղաքակիրք հասարակության ողջ պատմության ընթացքում արդիական է համարվում սոցիալական հավասարակշռության հիմնախնդիրը, որի լուծման գործում շատ է կարևորվում բնակչության սոցիալական պաշտպանության դերը: Կարևոր է հաշվի առնել այն հանգանակը, որ սոցիալական պաշտպանությանը բնորոշ է էվոլյուցիոն բնույթը: Սոցիալական պաշտպանության պարզագույն ձևերը գոյություն են ունեցել հասարակության զարգացման ամենավաղ փուլերում: Քաղաքակրթությունների զարգացման հետ մեկտեղ՝ սոցիալական պաշտպանության ապահովման գործում սկսել է առավելապես կարևորվել պետության դերը: Այսօր սոցիալական պաշտպանությունը յուրաքանչյուր նորմալ գործառող պետական համակարգի կարևոր բաղադրիչն է:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն՝<sup>1</sup>: Սոցիալական պետությունը ենթադրում է սոցիալական պաշտպանության արդյունավետ գործառող համակարգի առկայություն: Այս տեսանկյունից կարևոր է հասկանալ, թե սոցիալական պաշտպանության ինչ համակարգ և ինչպիսի մոդել է ձևավորվել հետխորհրդային Հայաստանում, ինչ փուլեր կարելի է առանձնացնել վերջինիս ձևավորման գործընթացում, որոնք են այդ համակարգի հիմնական տարրերը, որքանով է այն արդյունավետ գործառում, որոնք են այդ համակարգի զարգացման հեռանկարները:

Ինչ վերաբերում է հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացին, հարկ է նշել, որ այն պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի փուլերի: Առաջին փուլը շուկայական հարաբերությունների ձևավորման վերև էր, որն ընդգրկում է 1991-1995 թթ.: Անկախության հոչակումից հետո Հայաստանի իշխանությունների առջև ծառացան բազմաթիվ խնդիրներ, որոնց թվում էին աղքատների և գործազուրկների սոցիալական պաշտպանությունը, ինչպես նաև հասարակության բոլոր խավերի շահերը հաշվի առնող միասնական սոցիալական քաղաքականության մշակումը: Դա նորանկախ Հայաստանի համար բավականին բարդ խնդիր էր՝ սոցիալական պաշտպանության իրականացման մեխանիզմների և ավանդույթների բացակայության պատճառով: Խորհրդային Հայաստանի սոցիալական քաղաքականությունը համապատասխանում էր Խորհրդային Սիուրյան սկզբունքներին: Միևնույն ժամանակ, Հայաստանում գործում էին սո-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, գլուխ 1, հոդված 1: <http://www.president.am/hy/chapter1/, 21. 11. 2013 թ., ժամը 22:40>:

ցիալական պաշտպանության սեփական մեխանիզմները, որոնք հիմնված էն ազգային սովորույթների վրա:

Երկրորդ փուլում, որն ընդգրկում էր 1996-2000 թթ., սկիզբ դրվեց *սոցիալական աջակցության և սոցիալական ապահովագրության համակարգերի տարանջատմանը*: Անկախության տասը տարիների ընթացքում ՀՀ-ում իրականացված սոցիալական քաղաքականության ցուցանիշների դինամիկայի վերլուծությունը<sup>2</sup> ցույց է տալիս, որ սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումները չեն բնել հստակ մշակված սոցիալական քաղաքականությունից և եղել են ավելի շատ մարտավարական, քան ռազմավարական բնույթի: Սակայն սոցիալական պաշտպանության ոլորտում որպես դրական տեղաշարժ կարելի է առանձնացնել բնակչության սոցիալական պաշտպանության նոր կառուցակարգերի ստեղծումը, ոլորտը կանոնակարգող մի շարք իրավական ակտերի առկայությունը, սոցիալական աշխատողների պատրաստման և վերապատրաստման ծրագրերը, մշտական համագործակցությունը միջազգային կառույցների հետ, սոցիալական ոլորտի կառավարման համակարգի տեխնիկական զինունը և, իհարկե, ոլորտի բարեփոխումներին ուղղված բազմաթիվ ծրագրերի առկայությունը:

Երրորդ փուլը, որը ներառում է 2001 թվականից առ այսօր ընկած ժամանակահատվածը, *սոցիալական պաշտպանության ոլորտում բարեփոխումների իրականացման փուլը* է նախև առաջ պայմանավորված Եվրոպական ժայաստանի անդամակցությամբ: Հայաստանը, դառնալով Եվրախորհրդի անդամ (2001 թ.), պարտավորություն ստանձնեց Երկու տարում վավերացնելու Եվրոպական սոցիալական խարտիան: Դրա վավերացումը ՀՀ-ի կողմից (2004 թ.) ենթադրում էր նոր սկզբունքների և արդիական գաղափարների հիման վրա ամրագրված սոցիալական իրավունքների և նպատակների իրագործման ստանձնում, ինչն էլ իր հերթին նոր իրավիճակ ստեղծեց ՀՀ-ում իրականացվող սոցիալական քաղաքականության մեջ: Կանխորոշվեցին նաև սոցիալական բարեփոխումների ընթացքը և ուղղությունները: Առաջնահերթ խնդիր դարձավ սոցիալական օրենսդրության համապատասխանեցումը Եվրոպական չափանիշներին:

ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգը ներկայումս լայնածավալ բարեփոխումների փուլում է, որոնցից կարելի է առանձնացնել կենսաթոշակային համակարգի բարեփոխումները, որի շրջանակներում նախատեսվում է բաշխողական կենսաթոշակային համակարգից անցում կատարել բազմաստիճան կենսաթոշակային համակարգի՝ շեշտադրելով ապահովագրական կենսաթոշակային գաղափարը:

Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի հայաստանյան մոդելը խարսխված է գործող բաշխողական համակարգի վրա, որը լրացվել է Երկու նոր՝ պարտադիր և կամավոր կուտակային աստիճաններով: Նման մոտեցումը Հայաստանի պայմաններում պարտադրված էր Երկու կարևոր հանգամանքով.

- անհրաժեշտ էր պահպանել պետական բաշխողական կենսաթոշակային համակարգը այն չափով, որչափով այն սպասարկում է ներկայիս

<sup>2</sup>Տե՛ս «Մարդկային զարգացման գեկույց, Հայաստան 2001», Եր., 2001, էջ 93:

կենսաթոշակառուներին և պետք է սպասարկի կենսաթոշակային տարիքին մոտեցող այն բնակչությանը, որն արդեն իսկ ունի որոշակի աշխատանքային ստաժ: Այս առօլով բաշխողական համակարգի դերը գնալով կպակասի՝ հաշվի առնելով բնակչության կյանքի միջին տևողության կանխատեսվող միտումները:

- Պետական բաշխողական կենսաթոշակային համակարգը պետք է անընդհատ պահպանվի (չնայած ավելի փոքր ծավալներով), քանի որ այն պետք է ապահովի նվազագույն սպառողական զանքյուղին համարժեք հիմնական կենսաթոշակով կենսաթոշակային տարիքի (63 տարեկան) բոլոր կանանց և տղանարդկանց՝ անկախ այն հանգանակից, թե որ աստիճանի մասնակիցներ են նրանք:

Այսօր սոցիալական ծառայությունների ինտեգրման և համալիր մատուցման, երեխաների խնամքի հաստատությունների ապահնատիտուտավորման համապատասխան ծրագրեր են իրականացվում: ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում տեղի ունեցող կարևոր բարեփոխումներից է նաև սոցիալական աշխատանքի ինստիտուտի ներդրումը ՀՀ համայնքներում և այլն:

Հաճածայն «Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական ներառումը Հայաստանում» Եվրոպական հանձնաժողովի 2011 թ. գեկույցի՝ սոցիալական պաշտպանության համակարգը Հայաստանում կարևոր դեր է կատարում բնակչությանը սոցիալական աջակցություն տրամադրելու և ծայրահեղ աղքատությունը մեղմելու հարցում: Ավելին, սոցիալական պաշտպանության քաղաքականության հիմնական նպատակ է համարվում պետության կողմից սոցիալական ռիսկերի կառավարումը, նվազեցումը և կանխարգելումը: Պետությունը սահմանել է սոցիալական պաշտպանության համակարգի գործառույթները, որոնց հիման վրա բնակչության խցելի խմբերին առաջարկվում են համապատասխան ծրագրեր.

1. սոցիալական ապահովության,
2. սոցիալական պաշտպանության,
3. սոցիալական ապահովագրության,
4. զբաղվածության,
5. սոցիալական աջակցության պետական ծրագրերը<sup>3</sup>:

Դրանք համակարգելով՝ կարելի է առանձնացնել հետխորհրդային Հայաստանում ձևավորված սոցիալական պաշտպանության երկու կարևոր քաղադրիչ՝ սոցիալական ապահովագրություն և սոցիալական օգնություն:

Ըստ ՀՀ 2012-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի վերջնական նախագծի՝ սոցիալական պաշտպանությունը ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից է: Այդ նույն փաստաթղթում առանձնացված են նաև սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության հետևյալ նպատակադրումներ՝ աղքատության կրծատում, անհավասարության մեղմում, արժանավայել ծերու-

<sup>3</sup> Տե՛ս «Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական ներառումը Հայաստանում», գեկույց, Եվրոպական հանձնաժողով, Եր., 2011, էջ 8:

թյան ապահովում, բնակչության խոցելի խավերի հնարավորությունների ընդլայնում և նրանց որոշակի սոցիալական երաշխիքների ապահովում, ժողովրդագրական իրավիճակի բարելավում<sup>4</sup>: Այս նպատակների իրականացման համար սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական ծախսերը անվանական արտահայտությամբ 2008-2012 թթ. անընդհատ ավելացել են: Մասնավորապես, ըստ 2012 թ. ՀՀ պետական բյուջեի կատարման արդյունքների վերաբերյալ ՀՀ վարչապետի ելույթի, 2012 թ. սոցիալական պաշտպանության համակարգի ֆինանսավորումը զգալիորեն աճել է՝ 13,9% կամ 35 մլրդ դրամ<sup>5</sup>, որը հիմնավանում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթներ հատկացնելով, կենսաբոշակների, նպաստների, միանվագ դրամական օգնությունների ծավալների աճով, ինչպես նաև ՌԴ-ի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկերի, երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարաններով ապահովելու նպատակով միջոցների հատկացմամբ: Իսկ ըստ ՀՀ 2014-2016 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ միայն 2011-2012 թթ. սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղված ընդհանուր ծախսերի մակարդակը 252.2 մլրդ դրամից հասել է 288.2 մլրդ դրամի<sup>6</sup>: Այս ոլորտում ծախսերի մակարդակի նման աճը հիմնականում պայմանավորված է կենսաբոշակների ու պետական նպաստների չափերի շարունակական բարձրացմանբ:

Խոսելով սոցիալական պաշտպանության համակարգի մասին՝ շատ կարևոր է անդրադառնալ նաև սոցիալական պաշտպանության մոդելներին, որոնց հիմքում ընկած են սոցիալական պաշտանության համակարգի կազմակերպման և գործառնան սկզբունքները: Մասնագիտական գրականության շրջանակներում, ըստ տարբեր չափանիշների, առանձնացվում են սոցիալական պաշտպանության տարբեր մոդելներ: Թե սոցիալական պաշտպանության ինչպիսի մոդել է նախընտրում այս կամ այն երկիրը, սովորաբար նշվում է տվյալ երկրի սոցիալական պաշտպանության հայեցակարգում, որը շատ կարևոր փաստաթուղթ է համարվում:

Ըստ բնակչության սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական ծախսերի մակարդակի՝ Ռոբերտ Պիմեկերն առանձնացնում է սոցիալական պաշտպանության երկու մոդել՝ մնացորդային և հնստիտուցիոնալ՝: Առաջինը Ենթադրում է, որ սոցիալական օգնությունը պետք է տրամադրվի միայն կարիքավոր բնակչությանը, ընդ որում՝ պետական բյուջեից միջոցները հատկացվում են պետության սոցիալական գործառույթների իրականացման համար մնացորդային սկզբունքի համաձայն: Այդ իսկ պատճառով սոցիալական օգնությունը տրամադրվում է միայն ա-

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ 2012-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, վերջնական նախագիծ, Եր., 2012, էջ 89:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի ելույթը ՀՀ Ազգային ժողովում 2012 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման արդյունքների վերաբերյալ, <http://www.aravot.am/2013/05/29/248611/> (24.11.2013, ժամը 17:46):

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ 2014-2016 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 208, <http://www.gov.am/files/docs/1184.pdf> (11. 01. 2014, ժամը 15:13):

<sup>7</sup> Տե՛ս Leonard, P. Review, Robert Pinker, Social Theory and Social Policy, Journal of Social Policy, 1972, էջ 57:

ռավել կարիքավոր («մնացած») բնակչությանը, որը փոքրամասնություն է: Ինստիտուցիոնալ մոդելի շրջանակներում ենթադրվում է, որ պետությունը ձգում է վերաբաշխել առկա ռեսուրսները՝ հասարակության բոլոր շերտերի պահանջնունքները բավարարելու համար: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհնար է իրականացնել ռեսուրսների առավելագույն արդյունավետ վերաբաշխում, այն երկրներում, որտեղ գործում է սոցիալական պաշտպանության այս մոդելը, միշտ էլ կլինեն բնակչության որոշակի շերտեր, որոնք լրացուցիչ սոցիալական ծառայությունների կարիք կունենան:

Բավականին հետաքրքիր է բրիտանացի հետազոտող Ռիչարդ Թիթմուսի առաջարկած դասակարգման մոդելը, որը ինչ-որ տեղ նման է Պինկերի դասակարգմանը: Թիթմուսի կարծիքով, սոցիալական պաշտպանությունը սերտորեն կապված է բնակչությանը տրվող երաշխիքների հետ: Ըստ այդմ՝ նա առանձնացնում է բնակչության սոցիալական պաշտպանության հետևյալ մոդելները՝ մնացորդային, ինստիտուցիոնալ և արտադրական ձեռքբերումների մոդելի շրջանակներում, որը մշակվել է վերոհիշյալ երկու մոդելներից ավելի ուշ, շեշտը դրվում է մարդու տնտեսական ակտիվության վրա, այսինքն՝ օգնությունը տրամադրվում է բնակչության այն կատեգորիաներին, ովքեր չեն ցուցաբերել տնտեսական ակտիվություն և հետևաբար՝ չունեն համապատասխան ապահովագրական ստաժ:

Բնակչության սոցիալական պաշտպանության մոդելների մեկ այլ դասակարգում է առաջարկել դանիացի գիտնական Գոստա Էսպինգը: Անդերսենը: Առաջնորդվելով պետական քաղաքականության գերակայությունների շարքում սոցիալական պաշտպանությանն ուղղված քաղաքականության զբաղեցրած տեղով և վերաբաշխողական գործընթացներում պետության մասնակցության չափով՝ Անդերսենն առանձնացնում է սոցիալական պաշտպանության հետևյալ մոդելները՝ ազատական, պահպանական, սոցիալ-դեմոկրատական:<sup>8</sup>

Ազատական մոդելի համար բնութագրական է սոցիալական ապահովագրության, համընդհանուր պետական տրամսֆերտների, ինչպես նաև կարիքավորության գնահատման ընթացակարգի վրա հիմնված կենսաթոշակների ցածր մակարդակը: Եկամտի պահպանման սոցիալական ծրագրերը մեծ մասամբ ուղղորդված են դեպի ամենաաղքատները: Սոցիալական ծառայությունների մուտքը խճճված է մի շարք ընթացակարգային կանոններով, իսկ բուն օգնություն ստանալը հաճախ պիտակավորվում է:

Պահպանողական մոդելի դեպքում պետությունը իր հիմնական քաղաքական խնդիրն է համարում եկամուտների պաշտպանությունը: Ընդ որում, վերջինս անշան ազդեցություն ունի հասարակության մեջ եկամուտների վերաբաշխման վրա և միջամտում է միայն այն դեպքում, եթք մարդու՝ ինքնարավության հնարավորությունները սահմանափակ են:

Սոցիալ-դեմոկրատական մոդելը, որի վառ օրինակ է Շվեդիան, են-

<sup>8</sup> Տե՛ս Titmuss, R. M. Welfare State and Welfare Society. The Philosophy of Welfare, 1987, էջ 224:

<sup>9</sup> Տե՛ս G. Esping-Andersen. The Three Worlds of Welfare Capitalism. Cambridge: Polity Press & Princeton: Princeton University Press, 1990, էջ 9-34:

թաղրում է լրիվ գրադաժություն և եկամուների համահարթեցում:

Հարկ է նշել, որ Եվրոպայում արդեն մի քանի տասնամյակ է, ինչ գործում է Եվրոպական սոցիալական մոդելը (ԵՍՄ), որը հիմնված է սոցիալական արդարության և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության գաղափարների վրա: Չնայած այս ամենին՝ Եվրոպական միությունն ընդունում է, որ դեռևս առկա են մի շարք չլուծված խնդիրներ, քննադատում է ժամանակակից սոցիալական պետության, բիզնեսի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (առաջին հերթին արհմիությունների) դերը<sup>10</sup>:

Ըստ Անդրե Սապիրի՝ Եվրոպական միությունում կարելի է առանձնացնել սոցիալական պաշտպանության ոչ թե մեկ, այլ չորս մոդել՝ մայրցամաքային (կոնտինենտալ), անգլոսաքսոնական, սկանդինավյան և միջերկրածովյան<sup>11</sup>:

Սկանդինավյան մոդելին են դասվում Դանիան, Ֆինլանդիան, Շվեդիան, Նիդերլանդները, որոնց բնորոշ է սոցիալական պաշտպանության ամենաբարձր մակարդակը, ինչպես նաև համընդհանուր սոցիալական բարեկեցությունը:

Մայրցամաքային կամ կոնտինենտալ մոդելին դասվում են Ավստրիան, Բելգիան, Ֆրանսիան, Գերմանիան և Լյուքսեմբուրգը: Հարկ է առանձնացնել Գերմանիայի օրինակը, որտեղ այս մոդելը փոխակերպվել է սոցիալական շուկայական տնտեսության: «Սոցիալական շուկայական տնտեսություն» հասկացությունը 1946 թ. շրջանառության մեջ է դրել Ալֆրեդ Մյուլլեր Արմակը՝ սահմանելու համար այն տնտեսական քաղաքականությունը, որը համարում է «շուկայական ազատության» և «սոցիալական համահարթեցման» սկզբունքները: Այսպիսի սոցիալական քաղաքականության նպատակն է տնտեսական ոլորտում հասարակության յուրաքանչյուր անդամի ակտիվ ինքնադրսևորման պայմանների ստեղծումը, մասնավորապես՝ առաջին հերթին կարևորվում է աշխատունակ բնակչության համար բարենպաստ տնտեսական պայմանների ստեղծումը, որին էլ ուղղված են սոցիալական պաշտպանության հիմնական միջոցները<sup>12</sup>:

Անգլոսաքսոնական մոդելը կիրառում են Իռլանդիան և Մեծ Բրիտանիան: Այս մոդելին բնորոշ է համեմատաբար լայն սոցիալական աջակցության ցանցը: Սակայն պետք է նշել, որ տվյալ մոդելի շրջանակներում սոցիալական օգնության ծրագրերը խիստ անհատականացված են: Կարիքավոր բոլոր խմբերի հավասարության փոխարեն գործում է բնակչության առանձին կատեգորիաներին, օրինակ՝ կենսաթոշակառուներին, հաշմանդամներին, հիվանդ և անգործունակ անձանց, քիչ վարձատրվող ընտանիքներին, ոչ լրիվ ընտանիքներին և այլն, ընտրովի օգնություն ցուցաբերելու սկզբունքը:

Միջերկրածովյան մոդելը հատուկ է Հունաստանին, Իսպանիային,

<sup>10</sup> Տես Կարգալովա Մ. Վ. Европейский опыт и модернизация социальной сферы России // "Мир и политика", 2011, № 1(52), էջ 57-62:

<sup>11</sup> Տես André Sapir, Globalization and the Reform of European Social Models, Brussels, 2005, էջ 5:

<sup>12</sup> Տես Մյուլլեր-Արմակ Ա. Принципы социального рыночного хозяйства. СПб., 1999, էջ 264:

Պորտուգալիային, Իտալիային, որոնց սոցիալական ծախսերի հիմնական մասը կենսաթոշակների վճարումներ են: Այս երկրների սոցիալական պաշտպանության համակարգերը հիմնականում հիմնվում են աշխատանքի պաշտպանության և վաղ տարիքում կենսաթոշակային ապահովման վրա՝ դրանով իսկ աշխատանքային տարիքի բնակչությանն ազատելով աշխատաշուկայում մասնակցություն ունենալուց: Աշխատավարձերի կառուցվածքը ծնավորվում է կոլեկտիվ բնակցությունների միջոցով:

Հետխորհրդային Հայաստանի համար կարևոր խնդիրներից մեկը բնակչության սոցիալական պաշտպանության պրակտիկայում եվրոպական սոցիալական մոդելներից մեկը կամ մի քանիսը կիրառելու հնարավորության և նպատակահարմարության խնդիրն է: Սակայն չպետք է մոռանալ, որ եվրոպական սոցիալական մոդելները ծնավորվել և զարգացել են այնպիսի պայմաններում, որոնք դեռևս առկա չեն հետխորհրդային Հայաստանում:

Բնակչության սոցիալական պաշտպանության մոդելների վերոհիշյալ դասակարգումների վրա հիմնվելով՝ փորձենք հասկանալ, թե սոցիալական պաշտպանության ինչպիսի մոդել է ծնավորվել հետխորհրդային Հայաստանում: Իրականում այս հարցին դժվար է պատասխանել մի քանի պատճառով.

• ՀՀ-ում առ այսօր մշակված չէ սոցիալական պաշտպանության միասնական հայեցակարգ, թեպետ առկա են սոցիալական պաշտպանության ոլորտը կանոնակարգող բազմաթիվ իրավական ակտեր, մշակվել են բնակչության առանձին խնդերի (Երեխաներ, հաշմանդամներ և այլն) սոցիալական պաշտպանության ռազմավարական ծրագրեր: Մինչեւ սոցիալական պաշտպանության հայեցակարգի առկայության դեպքում կլուծվեր նաև սոցիալական պաշտպանության մոդելի խնդիրը:

• Վերլուծելով ներկայումս ՀՀ-ում գործող սոցիալական պաշտպանության համակարգը՝ կարելի է առանձնացնել որոշ տարրեր, որոնք բնորոշ են վերը նշված սոցիալական պաշտպանության մոդելներից մի քանիսին: Այսպես, օրինակ, ՀՀ-ում իրականացվող սոցիալական պաշտպանության պետական քաղաքականություն են ներառված որոշ տարրեր պահպանողական մոդելից, ինչպես օրինակ՝ սոցիալական ապահովագրության իրականացումը կենսաթոշակային ոլորտում, պետական միջոցների ներառումը սոցիալական ապահովության համակարգ (օրինակ՝ Երեխայի ծննդյան կապակցությամբ տրամադրվող միանվագ նպաստը), անվճար միջնակարգ կրթությունը և այլն: Բացի դրանից, Երկրում իրականացվող սոցիալական պաշտպանության պետական քաղաքականություն ներառվել են որոշակի տարրեր մնացորդային մոդելից, ինչպես օրինակ՝ սոցիալական օգնության տրամադրումը բնակչության առավել կարիքավոր խնդերին՝ աղքատներ, հաշմանդամություն ունեցող անձինք և այլն:

Ներկայումս ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգում տեղի են ունենում հետևյալ գործընթացները՝

- սոցիալական պաշտպանության համակարգի ապակենտրոնացում, ինչը բնորոշ է արևմտյան շատ երկրների,
- սոցիալական պաշտպանության հիմնախնդիրների ունիվերսալա-

ցում, այսինքն՝ սոցիալական պաշտպանության կարիք ունեցող մարդկանց թվաքանակի ավելացում,

- մասնագիտացված սոցիալական ծառայություններ ունենալու անհրաժեշտության գիտակցում,
- սոցիալական պաշտպանության այսպես կոչված «փոքր ձևերի» (ընտանեկան, համայնքային և այլն) գարգացում,
- առ այսօր բնակչության բոլոր կատեգորիաների համար մշակված չէ արտոնությունների համակարգ:

Դաշվի առնելով բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում տեղի ունեցող վերոհիշյալ գործընթացները՝ կարելի է ներկայացնել վերջինիս արդիականացման երկու հիմնական ուղղություն.

• Նախ և առաջ անհրաժեշտ է ավարտին հասցնել սոցիալական պաշտպանության ազգային համակարգի ձևավորման գործընթացը ըստ սոցիալական ստանդարտների, քանի որ սոցիալական և մասնագիտական ռիսկերից արդյունավետ պաշտպանությունը հնարավոր է միայն սոցիալական պաշտպանության բոլոր ձևերի առկայության պայմաններում: Սոցիալական պաշտպանության միասնական համակարգի բացակայությունը հանգեցնում է այն բանին, որ համակարգի յուրաքանչյուր տարր հանդես է գալիս ոչ թե որպես միասնական ամբողջության մի մասը, այլ որպես անկախ միավոր:

• Անհրաժեշտ է ուժեղացնել սոցիալական պաշտպանության ապահովագրական սկզբունքներն ու մեխանիզմները, քանի որ դրանով է պայմանավորված, թե ապահովագրական սկզբունքները որքանով արդյունավետ կլինեն գործազրկության դեմ պայքարում, բժշկական սպասարկման և սոցիալական պաշտպանության այլ ոլորտներում:

Դաշվի առնելով սոցիալական պաշտպանության համակարգի արդիականացման վերոհիշյալ ուղղությունները՝ նպատակահարմար է հստակ տարրանշատել սոցիալական օգնության ակտիվ և պասիվ ձևերը: Սոցիալական օգնության ակտիվ ձևերը նախատեսված են սոցիալական, ստեղծագործական և աշխատանքային ակտիվությունը խթանելու համար և ուղղված են անձի ինքնապահովմանն ու ինքնազարգացմանը: Օ. Ա. Խասբուլատովան և Ի. Գ. Էրմիշը<sup>13</sup> առանձնացնում են վերջինիս շրջանակներում նախատեսվող հետևյալ միջոցառումները՝ կադրերի մասնագիտական պատրաստման և վերապատրաստման համակարգի կատարելագործում, բնակչության զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերի մշակում, ձեռներեցության զարգացում, հաշմանադամություն ունեցող անձանց աշխատատեղերի բխութավորում և այլն:

Սոցիալական օգնության պասիվ միջոցառումների թվին են պատկանում բնակչության առավել խոցելի խնբերին (հաշմանդամներ, հղիներ, երեխայի խնամքի արձակուրդում գտնվող մայրեր և այլն) տրամադրվող ուղղակի դրամական հատկացումները:

Սոցիալական պաշտպանության այսպիսի մոդելը հնարավորություն կընձեռի պետության միակողմանի պարտականություններից անցում կա-

<sup>13</sup> **Տես Խասբուլատովա Օ. Ա., Էրմիշ Ի. Գ.** Модернизационные аспекты системы социальной защиты населения // <http://www.womaninrussia.ru/content/modernizatsionnye-aspekyt-sistemy-sotsialnoi-zashchity-naseleniya>. 24.11.2013 թ., ժամը 12:45:

տարելու պետության և քաղաքացու երկողմանի պարտականություններին, ասել է թե՝ «սոցիալական գործողության ալգորիթմին»<sup>14</sup>: Ակնհայտ է, որ սոցիալական պաշտպանության այս մոդելը ենթադրում է սոցիալական օգնության տրամադրման գործընթացում հասցեականության սկզբունքի շեշտադրում քաղաքացիների այն կատեգորիաների նկատմամբ, ովքեր ունեն օբյեկտիվ տնտեսական դժվարություններ, բայց նիևնույն ժամանակ շահագործված են վերականգնելու աշխատանքային ակտիվությունն ու սոցիալական դրական կապերը:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ այսօր Հայաստանի համար դեռևս բաց է մնում այն հարցը, թե սոցիալական պաշտպանության որ մոդելն առավել նպատակահարմար կլինի երկրի սոցիալական զարգացման համար: Այսօրվա բոլոր իրողություններին համապատասխան և միևնույն ժամանակ պետական ավանդույթների, սեփական պատմական փորձի և արտասահմանյան փորձի վրա հիմնված սոցիալական պաշտպանության մոդելի նպատակային, գիտակցված ընտրությունը այն կարևոր խնդիրներից է, որը պետք է լուծվի սոցիալապես կողմնորոշված շուկայական տնտեսության կառուցման ճանապարհին: Այդ ընտրությամբ է մեծապես պայմանավորված երկրի սոցիալական բարեկեցությունը:

Այսպիսով, ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգը ձևավորման փուլում է, իսկ առևկա բացրողումները առաջին հերթին պայմանավորված են ՀՀ-ում տնտեսական իրական հնարավորությունների վրա հիմնված սոցիալական պաշտպանության միասնական հայեցակարգի բացակայությամբ: Սոցիալական պաշտպանության համակարգի հետագա զարգացումը հիմնականում պայմանավորում են սոցիալական պաշտպանության միասնական հայեցակարգի մշակումը, սոցիալական պաշտպանության մոդելի ընտրությունը, սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումներին ուղղված մի շարք ծրագրերը, սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակադրումների հետևողական իրագործումը:

**Բանալի բառեր – սոցիալական պաշտպանություն, սոցիալական ապահովագրություն, սոցիալական ապահովություն, սոցիալական երաշխիքներ, սոցիալական ռիսկեր, սոցիալական պաշտպանության մոդել, սոցիալական պաշտպանության հայեցակարգ, սոցիալական օգնության ակտիվ ձև, սոցիալական օգնության պասիվ ձև**

**МАРИНЕ ЯРМАЛОЯН – Формирование системы и модели социальной защиты населения в постсоветской Армении.** – В статье проанализирован процесс формирования системы социальной защиты населения в постсоветской Армении, а также показаны перспективы её развития. Поскольку Армения, как сказано в её Конституции, является социальным государством, важно понять, какая система и модель социальной защиты в ней сформированы, описать основные их элементы и рассмотреть, насколько эта система эффективна.

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը:

**Ключевые слова:** социальная защита, социальное страхование, социальное обеспечение, социальные гарантии, социальные риски, модель социальной защиты, активная форма социальной помощи, пассивная форма социальной помощи

**MARINE YARMALOYAN – *The Formation of Social Protection System and Model of Population in post-Soviet Armenia.*** – The article is devoted to the study of formation process and perspectives of social protection system in post-Soviet Armenia. Taking into consideration the fact that according to the Constitution of RA the Republic of Armenia is a social state, it is very important to explore and understand what kind of system and model of social protection are formed in post-Soviet Armenia. Besides, it is very important to describe the development process of social protection system, its main elements, analyze the effectiveness and development perspectives of the system. All these important questions have been discussed in the frames of the article.

**Key words** – *social protection, social insurance, social assistance, social provision, social guarantees, social risks, model of social protection, concept of social protection, active form of social assistance, passive form of social assistance*